ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 153

«14» 10 2019թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2019թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Առդիր՝ 5 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2019թվական թիվ 12

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՍՐԲՈՒՀԻ ՍԱՐԳՍԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2 փետրվարի 2002թվականի թիվ 88 որոշումով՝ «Շենքերի,շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» և հիմք ընդունելով Սրբուհի Սարգսի Թորոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2-րդ փողոց 15 տուն հասցեում գտնվող շենքի մի մասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության, որպես խանութ օգտագործելու համար:
2.Ապահովել նշված տարածքի օգտագործումը, որպես խանութ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի թիվ 88 որոշման «Շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու մասին»:
3.Սրբուհի Սարգսի Թորոսյանին՝ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական սեպտեմբերի 30
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«2» սեպտեմբերի 2019թվական թիվ 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019-2020Թ.Թ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի 1-ին մասի 7-րդ կետով, հոդված 46-ի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019թվականի օգոստոսի 23-ի, թիվ 38 որոշումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Համայնքի ավագանու թիվ 38 որոշումով հատկացված՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամը, օգտագործել՝ 2019-2020թթ. ուսումնական տարում Մրգաստանի միջնակարգ դպրոցի առաջին դասարան հաճախող երեխաներին, պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածու ձեռք բերելու և նվիրելու նպատակով:
2.Աշխատական հանձնաժողովին՝ վերահսկել կատարված աշխատանքները և զեկուցել համայնքի ղեկավարին:
3.Հաշվապահին՝ կատարել վճարում օրենքով սահմանված կարգով:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվականի սեպտեմբերի 2
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«4» սեպտեմբերի 2019թվական թիվ 29

## ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ և 84-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Գայանե Միսակի Հակոբյանի դիմումը աշխատանքի ընդունվելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Մրգաստան համայնքի բնակչուհի՝ Գայանե Միսակի Հակոբյանի հետ կնքել «Աշխատանքային պայմանագիր» 4-ը սեպտեմբերի 2019թվականից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմում, որպես հավաքարար աշխատելու համար:
2.Աշխատավարձի չափ սահմանել՝ ըստ հաստիքացուցակի
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական սեպտեմբերի 4
Մրգաստան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«4» սեպտեմբերի 2019թվական թիվ 30

### ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ և 84-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Էլզա Հրայրի Հովակիմյանի դիմումը աշխատանքի ընդունվելու մասին.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Մրգաստան համայնքի բնակչուհի՝ Էլզա Հրայրի Հովակիմյանի հետ կնքել «Աշխատանքային պայմանագիր» 4-ը սեպտեմբերի 2019թվականից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմում, որպես պահակ աշխատելու համար:
2.Աշխատավարձի չափ սահմանել՝ ըստ հաստիքացուցակի:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական սեպտեմբերի 4
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«30» սեպտեմբերի 2019թվական թիվ 31

ՍԱՀԱԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով աշխատակազմի քարտուղարի ծանուցագիրը պայմանագրի ժամկետը լրանալու մասին

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի սեզոնային աշխատանքներ իրականացնող բանվոր՝ Սահակ Գուրգենի Հարությունյանի հետ կնքած «ժամկետային աշխատանքային» թիվ 2 պայմանագիրը, գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 1-ը հոկտեմբերի 2019թվականից:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2019թվականի հոկտեմբերի 1-ից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական սեպտեմբերի 30
Մրգաստան համայնք